

«ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԵՒ ԻՐԱՆԻ ՄԻՋԵՒ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՏԵՂԻ ՊԵՏԻ ՈՒՆԵՆԱՆ ԿԻՐԱԿԻ ՕՐ ՄԱՍՔԱՅԻ ՄԷՉ»

Կ'ԸՍԵ ՕՍԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԸ

Օմանի արտաքին գործոց նախարար Պատր Պուսայիտի յայտնեց. «Միացեալ Նահանգներու եւ Իրանի միջեւ հիւլեական բանակցութիւնները տեղի պիտի ունենան կիրակի օր Մասքաթի մէջ»: «Ուրախ եմ հաստատելու, որ Իրան-ամերիկեան բանակցութիւններու 6-րդ փուլը պիտի գումարուի Մասքաթի մէջ կիրակի, 15 յունիսին», նշեց ան: Նախքան այդ, Իրանի արտաքին գործոց նախարարութիւնը յայտարարած է. «Իրանի եւ Միացեալ Նահանգներու միջեւ անուղղակի բանակցութիւններու յաջորդ փուլը տեղի պիտի ունենայ յառաջիկայ կիրակի օր, Մասքաթի մէջ»: Ամերիկացի պաշտօնատար մըն ալ ամերիկեան «Աքսիոս» կայքին յայտնած էր. «Ուաշինկթընի եւ Թեքրանի միջեւ բանակցութիւններու 6-րդ փուլը պիտի գումարուի ուրբաթ օր Օսլոյի մէջ կամ կիրակի օր Մասքաթի մէջ»:

ԹՐԱՄՓ. «ՉԵՄ ԸՍԵՐ, ԹԵ ԻՐԱՆԻ ՎՐԱՅ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՅԱՐՉԱԿՈՒՄԸ ՄՕՏԱԼՈՒՏ Է, ՍԱԿԱՅՆ ԱՆՈՐ ՀԱՒԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՄԵԾ Է. ԻՐԱՆ ՊԵՏՔ Է ՁԻՋՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԷ»

Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփ երէկ յայտնեց. «Կ'ուզեմ խուսափիլ Իրանի հետ հակամարտութենէ, եւ Իրան պէտք է զիջումներ կատարէ»:

«Չեմ ըսեր, թէ Իրանի վրայ խորայելեան յարձակում մը մօտալուտ է, սակայն անոր հաւանականութիւնը մեծ է», շեշտեց ան:

Ամերիկեան «Սի.Պի.Էս.» պատկերասփիւռի կայանը հաղորդեց, որ ամերիկացի պաշտօնատարներ ստացած են տեղեկութիւններ, որոնք ցոյց կու տան, թէ Իսրայել պատրաստ է Իրանի դէմ զինուորական գործողութիւն մը կատարելու:

Լաւատեղեակ աղբիւրներ պատկերասփիւռի կայանին յայտնած են. «Ամերիկացի պաշտօնատարները տեղեակ են, թէ Իսրայել ամբողջովին պատրաստ է Իրանի դէմ գործողութիւն մը շղթայագերծելու»:

Կայանը կ'աւելցնէ. «Միացեալ Նահանգներ կը նախատեսեն, որ Իրան մերձակայ Իրաքի մէջ ամերիկեան որոշակի կառոյցներու դէմ վրէժնորակա՛ն հարւած մը շղթայագերծէ»:

Շար.ը՝ էջ 2

ՌՈՒՍԻԱՆ ԵՒ ՈՒՔՐԱՆԻԱՆ ԳԵՐԻՆԵՐՈՒ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԵՆ



Ռուսիոյ պաշտպանութեան նախարարութիւնը յայտնած է, որ Ռուսիան գերութենէ վերադարձուցած է ռուս զինուորներու երրորդ խումբը: Ատոր դիմաց Ուքրանիոյ զինեալ ուժերու զինուորները յանձնուած են Ուքրանիոյ: Փոխանակումը կատարուած է 2 յունիսին Պոլսոյ մէջ ձեռք բերուած համաձայնութիւններու ծիրին մէջ:

Տեղեկութիւնը յայտնած է Նաեւ Ուքրանիոյ Նախագահ Վոլոտիմիր Չելենսքի: Փոխանակուած անձերու թիւը չի նշուիր:

9 յունիսին Ռուսիոյ պաշտպանութեան նախարարութիւնը յայտարարած էր զինուորներու փոխանակման առաջին փուլի մասին, իսկ երկրորդ փուլը տեղի ունեցած էր յաջորդ օրը: Փոխանակուածներու ճշգրիտ թիւը չէ հրապարակուած:

11 յունիսին Ռուսիան Բիելին փոխանցած է Ուքրանիոյ զինեալ ուժերու 1212 զինուորներու դիակներ եւ ստացած 27 ռուս զինուորներու աճիւնները:

Երեկ կը նախատեսուէր սկսիլ ծանր վիրաւորներու փոխանակումը:

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՄԷՉ ՕԳԱՆԱԻ ՋԱԽՋԱԽՈՒՄԻՆ ՀԵՏԵՒԱՆՔՈՎ 290 ՁՈՀ



Հնդկաստանի «Էր Իստիա» օդանաւային ընկերութեան «Պոլինկ 787-8 Տրիմալայնը» օդանաւէն ոչ ոք ողջ մնացած է: Այս մասին կը հաղորդէ «Էսոշիէյթըտ Փրես»-ը՝ յղում կատարելով հնդկական ոստիկանութեան:

«Կարծեք թէ օդանաւի ջախջախման հետեւանքով ողջ մնացածներ չկան: Չոհերու մասին ճշգրիտ տուեալները կը պարզուին», գործակալութեան յայտնած է ոստիկանութեան պաշտօնատարներէն Գ. Մալիք:

Օդանաւին մէջ եղած է 242 մարդ՝ 230 ճամբորդ (169 Հնդկաստանի քաղաքացի, 53 Արիտանիոյ քաղաքացի, 7 փորթուկալցի եւ 1 քանատացի), 2 օդաչու եւ 10 ուղեկցորդուհի:

Աւելի ուշ, հնդկական ոստիկանութիւնը յայտարարեց, թէ զոհերուն թիւը 290 է: Արկածը տեղի ունեցած է Հնդկաստանի արեւմուտքը գտնուող Ահմատապատ քաղաքի օդակայանէն թռիչքի ժամանակ:



ՀԻՒԼԷԱԿԱՆ ՈՒԺԱՆԻԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԳ. «ԻՐԱՆ ԶԻ ԿԱՏԱՐԵՐ ՀԻՒԼԷԱԿԱՆ ՊԱՐՏԱՌՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ»

Հիւլեական ուժանիւթի միջազգային գործակալութեան Կառավարիչներու խորհուրդը երէկ որդեգրած է բանաձեւ մը, որուն համաձայն, Իրան չի կատարեր իր հիւլեական պարտաւորութիւնները: Այս մասին կը հաղորդէ «Էսոշիէյթըտ Փրես»:

«Դիւանագէտներու համաձայն, Հիւլեական ուժանիւթի միջազգային գործակալութեան Կառավարիչներու խորհուրդի անդամ 19 երկիր թեր քուէարկած է բանաձեւին... Ռուսիան, Չինաստանը եւ Պուրքիսա Ֆասոն քուէարկած են դէմ, 11 երկիր մնացած է ձեռնպահ, իսկ



երկու երկիր չէ քուէարկած», կը հաղորդէ լրատու գործակալութիւնը:

«Էսոշիէյթըտ Փրես» կը նշէ, որ բանաձեւի նախագիծը ներկայացուցած են Միացեալ Նահանգները, Ֆրանսան, Արիտանիան եւ Գերմանիան:

Շար.ը՝ էջ 2

ՓԵՁԵՇՔԻԱՆ. «ԱՌԱՋՆՈՐԴԸ ՅՍՏԱԿ ՅԱՅՏԱՐԱՐԱԾ Է՝ ԻՐԱՆ ՀԻՒԼԷԱԿԱՆ ՁԵՆՔ ՊԵՏԻ ՉՍՏԵՂԾԷ»

Իրանի նախագահ Մասուտ Փեզեշքիան յայտարարած է, թէ Միացեալ Նահանգներու հետ որեւէ բանակցութեան հիմքը Իրանի գերագոյն հոգեւոր պետ ալախալլա Ալի Խամենեյի կողմէ սահմանուած կէտերն են եւ ոչ թէ այլ երկիրներու կողմէ ճնշումները կամ հարկադրանքը:

«Միացեալ Նահանգներու հետ բանակցութիւնները կը կառուցուին յեղափոխութեան առաջնորդի որոշած քաղաքականութեան հիման վրայ:

Շար.ը՝ էջ 8



ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՉ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿՐՕՆԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐՈՒ ԼԻԱԿԱՏԱՐ ՆԻՍՏԵՐԸ



Նախագահութեամբ Արամ Ա. վեհափառ հայրապետին, երեքշաբթի, 10 յունիս 2025-ին սկսան հայ եկեղեցու Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսու-

թեան Ազգային կեդրոնական վարչութեան կրօնական ու Զաղաքական ժողովներու լիակատար յաջորդական նիստերը:

Շար.ը՝ էջ 8

ԵՏՈՔԻՄՈՎ. «ԱԼԻԵՒԻ ԻՄԱՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՓՈՒԹԻՆԻ ՀԵՏ ԱՆՈՐ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԸՆՈՐՀԻՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒԱԾ Է»

Մոսկուան իր աշակցութիւնը կը յայտնէ Հայաստանի Կովկասի մէջ խաղաղութեան հաստատման եւ պատրաստ է նպաստելու Պաքուի եւ Երեւանի յարաբերութիւններու կարգաւորման: «Ազատութիւն» ծայնասփիւռի կայանը կը հաղորդէ, որ այս մասին «Պաքու Թի.Վի.»-ի հետ զրոյցի ընթացքին յայտարարած է Ազրայեճանի մէջ Ռուսիոյ դեսպան Սիխայիլ Եվտոքիմով:

Ռուս դիւանագետին համաձայն, «Մոսկուայի համար շատ կարեւոր է, որ Հայաստանի Կովկասի մէջ խաղաղութիւն ըլլայ: Իշխման Ալիեւի իմաստութեան եւ Վլատիմիր Փութինի հետ անոր յարաբերութիւններուն շնորհիւ այդ խաղաղութիւնը վերականգնուած է»:

Ազրայեճանի մէջ Ռուսիոյ դեսպանը Նաեւ նշած է, որ իր երկիրը կ'ողջունէ Հայաստան-Ազրայեճան խաղաղութեան համաձայնագրի բովանդակութեան համաձայնեցումը եւ շահագրգիռ է, որ երկու երկիրներուն միջեւ յարաբերութիւններու կարգաւորման հոլովոյթը շարունակուի:



«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԲՈԼՈՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԿԸ ՏՐԱՄԱԳՐՈՒԻ ՊԱՏՇԱՃ ՏԵՂԵԿԱՏՈՒԹԻՒՆ»

Կ'ԸՍԵ ՓԱՇԻՆԵԱՆԻ ԲԱՆԲԵՐԸ

«24Նիւլզ», յղում կատարելով իր բարձրաստիճանի դիւանագիտական աղբիւրին, հաղորդեց, որ Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեան 20 յունիսին պիտի մեկնի Անգարա, ուր հանդիպում պիտի ունենայ Թուրքիոյ Նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողլանի հետ:

«Թերթ» վարչապետի բանբեր Նազելի Բաղդասարեանին հարցուցած է՝ արդեօք Փաշինեանի Անգարա այցելութիւնը կը նախատեսուի՞:

«Հայաստանի Հանրապետութեան վարչապետի բոլոր միջազգային այցելութիւններուն մասին ժամանակին կը տրամադրուի պատշաճ տեղեկատուութիւն», պատասխանած է Բաղդասարեան:

ՓԱՇԻՆԵԱՆ ԸՆՈՐՀԱՌՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁՆԵՐ ՅՂԱԾ Է ՓՈՒԹԻՆԻ ԵՒ ՄԻՇՈՒՍԹԻՆԻՆ՝ ՌՈՒՍԻՈՅ ՕՐՈՒՄԸ ԱՌԻՈՎ

Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեան Ռուսիոյ օրուան առիթով շնորհաւորական ուղերձներ յղած է Ռուսիոյ Նախագահ Վլատիմիր Փութինի եւ Ռուսիոյ վարչապետ Սիխայիլ Միշուսթինին:

Փութինին ուղղուած նամակին մէջ նշուած է. «Ռուսիոյ ժամանակակից պատմութեան մէջ այս օտոնը կը հանդիսանայ սերունդներու ժառանգորդութեան խորհրդանիշը: Ամէն տարի այս օրը ռուսաստանցիները կը նշեն երկրի պետական գերիշխանութեան հռչակումը՝ իբրեւ ժամանակակից Ռուսիոյ պատմութեան նոր փուլի սկիզբ:

«Համոզուած եմ, որ միացեալ ջանքերու շնորհիւ Հայաստանի Հանրապետութեան եւ Ռուսիոյ միջեւ յարաբերութիւնները պիտի զարգանան եւ պիտի ամրապնդուին՝ ի նպաստ մեր երկիրներու ժողովուրդներու բարօրութեան»:

Միշուսթինին ուղղուած նամակին մէջ նշուած է. «Այս օրը ժամանակակից Ռուսիոյ նորագոյն պատմութեան մէջ մեկնարկային կէտ է, որ կը նշանաւորէ պտուտութեան եւ հասարակութեան զարգացման նոր փուլի սկիզբը:

«Համոզուած եմ, որ Հայաստանի Հանրապետութեան եւ Ռուսիոյ կառավարութիւններուն միջեւ հետեւողական բազմամակարդակ համագործակցութիւնը պիտի շարունակէ նպատակային զարգանալ՝ նպաստելով փոխշահաւետ նախագիծերու իրականացման եւ երկու պետութիւններու տնտեսական ներուժի արդիւնաւետ օգտագործման»:



## ՄԱՐԳԻՍ ԱԶՆԱԴՈՐԵԱՆԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ 40-ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄ

Կազմակերպությամբ ՀՀ «Նիկոլ Դուման» կոմիտեին, ուրբաթ, 6 յունիս 2025-ի երեկոյան ժամը 8:00-ին «Յակոբ Տեր Մելքոնյան» թատերասրահին մեջ տեղի ունեցավ Մարգիս Ազնաուրեանի նահատակության 40-ամեակին նուիրած ծեռնարկը:

Լիբանանի, Հայաստանի, Արցախի եւ ՀՀ-ի քաղաքներու յոտնկայս ունկնդրութենէն ետք ծեռնարկին բացման խօսքը արտասանեց Գօգօ Պասմաճեան: Ան հայարտութեան եւ երախտապարտութեան զգացումներ պարգեց «Նիկոլ Դուման» կոմիտէի անցեալի ընկերներէն մէկուն՝ Մարգիս Ազնաուրեանի նկատմամբ, հարց տալով, թէ ինչպէ՛ս կոմիտեութեան նոր սերունդը չհայարտանայ, երբ կը տեսնէ սրահին մէջ հաւաքուած յարգելի հիւրերը, որոնք ներկայ են արժեւորելու Մարգիս Ազնաուրեանը, անձնուրաց յեղափոխականը, խիզախ ղեկավարը: Պասմաճեան նաեւ ներկայացուց օրուան յայտագիրը:

ՀՀ «Նիկոլ Դուման» կոմիտէի խօսքը արտասանեց Մարալ Միսեսան: Ան դիտել տուաւ, որ «Նիկոլ Դուման»-ը հիմնուեցաւ Թրատ թաղամասին մէջ, 50-ական թուականներուն, երբ հոն ապրած հայերու մեծ տոկոսը կազմուած էր ատաւազներէ, եռկաթոցներէ, էյպեզներէ, ինչպէս նաեւ՝ իսլամ եւ քրիստոնէյ տեղացիներէ, բան մը, որ յատուկ նկարագիրի խմորում մը ստեղծեց մեր թաղերուն եւ խաչմերուկներուն վրայ: Հետեւաբար դաշնակցականին վեհանձնութիւնը խառնուեցաւ յանդըգնութեան հետ, կուսակցական գաղափարախօսութիւնը գոլորդուեցաւ ազգային գիտակցութեան հետ՝ կազմելով ամուր եւ ճշմարիտ



Նախմբութիւն է, որովհետեւ անգամ մը եւս մենք միասին երդում կու տանք, դաշնակցական երդումը, հայութեան երդումը, որ յանձնառու ենք մեր ժողովուրդի ֆիզիքական պաշտպանութեան, որուն գլխաւոր եւ գլխագիր գործը հիմնեցին Մարգիս Ազնաուրեաններ, Արօ Աշեաններ, Անդրանիկ Պաղտասարեաններ, Յակոբ Մարտուպեաններ: «Մենք ուրախ եւ հպարտ ենք, որ մեր թշնամիները մեզի նահատակ տուին, եւ նահատակը իր գործի շարունակականութեամբ եկաւ ըսելու, որ 1985 ապրիլ 23-ի առաւօտեան, երբ մենք բոլորս կը պատրաստուէինք ոգեկոչելու Հայոց ցեղասպանութեան



լի սերունդ մը, որ միշտ ալ գնահատուեցաւ բոլորին կողմէ՝ իր քաջութեամբ: Ան հաստատեց, որ այս սերունդին մէջ ունեցանք բազմաթիւ նշանակալից եւ արժեւորելի ընկերներ, ինչպէս՝ Անդրանիկ Պաղտասարեանը՝ քառալոյ Անդոն, Յակոբ Մարտուպեանը՝ փաշան, Մարգիս Ազնաուրեանը, նաեւ՝ բազմաթիւ ընկերներ, որոնք իրենց խիզախ կեցուածքներով յատուկ դրոշմ մը ձգեցին մինչեւ օրս կոմիտեութեան թաղամասերուն վրայ:

«Ծիշդ է, որ Մարգիս Ազնաուրեանը կը պատկանէր նոյն սերունդին, նոյն մղբ-նոլորտին, նոյն կոմիտեութեան, սակայն իր մշտական ներկայութեամբ կրցաւ անցնել պարկէշտութիւն ու համբերութիւնը: Այս էր պարագան ընկ. Մարգիսներուն, մանաւանդ երբ ներկայութիւնը ընկերային է՝ անկախ ընկերականէն եւ թելադրանքներու ոճը՝ համետ, ոչ իրամայական: Արդեօք ասոնք չէ՛ն արժեւորող մարդոց յատկանիշները», հաստատեց Միսեսան՝ անցնելով, որ ան խստապահանջ էր, եւ երբ ակումբ կը մտնէր, իր հետ կը բերէր ճշմարիտ եւ աշխուժութիւն: Ամէն սերունդ իր բաժինը ունէր սորվելու Մարգիս Ազնաուրեանէն, որուն առաւելութիւնը, խիզախութեան հետ մէկտեղ, խոհեմ դիւանագիտութիւնն էր, իսկ այս երկուքը կ'ամբողջացնէին համբերութիւնը: Ծարուակելով իր խօսքը՝ Միսեսան հաստատեց, որ այսպիսի կարողութիւններով օժտուած ընկերը քանի մը տասնամեակ ամբողջ քանդակեց «Նիկոլ Դուման»-ի իրերայաջորդ մարմինները՝ հասնելու համար կոմիտեութեան տարածաշրջանին մէջ բնակող հայութեան սրտին եւ համակրանքին եւ իր սովորական քաղաքավարութեամբ ու հաւասարակշիռ վարուելակերպով յատուկ յարգանքի արժանացաւ նոյնիսկ ոչ համակիր շնորհակալներէն: Միսեսան ըսաւ, որ Կեդրոնական կոմիտէի ժողովները, ինչպէս նաեւ ուրիշ պարտականութիւններ գիցեց չանցատեցին իր շնորհակալէն, իր ընկերներէն: Պահեց կապը նոյն հարազատութեամբ, նոյն մտերմութեամբ, բան մը, որ հաւատարմութեան չափանիշի կարեւորագոյն փորձաքարը կը նկատուի:



70-ամեակը, դաւադիր ծեռքերը մեզմէ միայն ֆիզիքապէս կրցան բաժնել Ազնաուրեանը: Ան մտաք իր դպրոցով, իր դաստիարակութեան արժանի տղոց-մով, հաստատեց Աւագեան՝ անցնելով, որ Մարգիս Ազնաուրեանը արգասիքն է 1890-ին հիմնուած այն պաշտելի կուսակցութեան, որուն անդամները եւ համակիրներն ենք, որ եկաւ օրին ըսելու՝ վերջ հայութեան ստրկութեան եւ ֆիզիքական սպառնալիքներուն, եւ որուն նահատակներու շարանը երկար է, որուն ցնծալի նահատակներէն մէկն է Ազնաուրեանը: Աւագեան դիտել տուաւ, որ այն

օրէն, երբ 1890-ին Դաշնակցութիւնը յանձնառութեան տակ մտաւ իր ժողովուրդի ֆիզիքական շահերը պաշտպանելու, Ազնաուրեան իր սերունդը եկաւ ըսելու, որ սփիւռքի ամէնէն բաբախուն գաղութին՝ Լիբանանի մէջ, նոյն ֆիզիքական պաշտպանութեան յանձնառութիւնը ունի, անցնելով, որ 1965-էն ետք Լիբանանի մէջ երբ թրջաբարոյ երեւոյթներ սկսան, նաեւ կուսակցութեան հանգամանքին նկատմամբ կեցուածքներ գոյացան, այդ դպրոցի ներկայացուցիչները անարատ պահեցին Պուրճ Համուտը, հայութիւնը եւ պաշտպանեցին զանոնք: Աւագեան հաստատեց, որ Մարգիս Ազնաուրեանի դպրոցին պատկանողները աշխարհի տարածքին իրենց ներկայութեամբ, գործունեութեամբ, խիզախութեամբ ըսին մեր դարաւոր ոսոխին, որ մենք տակաւին ոտքի ենք: «Խիզախ բառը Մարգիս Ազնաուրեանէն թող ըլլայ ձեր ճակատին գրուած ամէնէն մեծ գէնքը», եզրափակեց Յովսէփ Աւագեան՝ հաստատելով, որ այսօր այս հաւաքը կու գայ ուխտելու, թէ այն, ինչ որ շատեր փորձեցին մեզմէ խլել, մեզմէ կրկնապատկիւր ստացան:

Այնուհետեւ գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր՝ կատարողութեամբ Համազգայինի Գեղարուեստի դպրոցներուն:

ՀՀ Կեդրոնական կոմիտէի խօսքը արտասանեց Յակոբ Լատոյեան: Ան հաստատեց, որ ՀՀ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի անդամ, ամբողջ կեանք մը միութեանական եւ կուսակցական յայտնի եւ անկայտ գործերու նուիրեալ, ամբողջ կեանք մը իր ժողովուրդի առաքելութեան եւ անձեռնմխելիութեան օրակարգը առաջնակարգ նկատած մեզի համար Մարգիս Ազնաուրեանի տիպարը, անձը, ընկերը եւ օրինակը դաստիարակչական բնոյթ ունի, անցնելով, որ մեզի համար ոգեկոչման ծեռնարկները յիշատակումի սահմանէն անդին՝ ամրապնդման եւ վերանորոգման առիթներ են, դաստիարակչական եւ վերանորոգման ոգեկոչում են եւ միեւնոյն ատեն արտաքին ու ներքին երկու պատգամներ ունին իրենց մէջ:

Լատոյեան բացատրեց, որ արտաքին իմաստով՝ վստահ ըլլալու եւ շեշտելու, որ մեր պատմութիւնը վկայ է մեր ուղեգիծի անխախտ եւ անսակարկ վերջ սկզբունքին: Ան հաստատեց, որ եթէ անցնող վերջին հարիւր տարուան

Շար.ը՝ էջ 2

## ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԵՐԵՍՓՈԽԱՆ ՅԱԿՈԲ ԲԱԶԱՐԱՏՈՒՆԻԻ



Համազգայինի «Զնար» պարախումբի պարուսոյցներ Կարեն եւ Ժազին Մակիսեաններ, ընկերակցութեամբ Լիբանանի Շրջանային վարչութեան, շնորհակալական այցելութիւն մը տուին Հայկական երեսփոխանական գրասենեակ եւ հանդիպում ունեցան ՀՀ Բիւրոյի անդամ, Միջին Արեւելքի պատասխանատու, Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ Յակոբ Բազարատունիի հետ:



Հայրենի արուեստագետները իրենց երախտագիտութիւնը յայտնեցին Յակոբ Բազարատունիին՝ Լիբանան կեցութեան ընթացքին անոր ցուցաբերած օժանդակութեան համար:

Համազգայինի Շրջանային վարչութիւնը, իր կարգին, շնորհակալութիւն յայտնեց երեսփոխանին, ՆԵՄԵՍԻՍ եւ ՅԱՐՅԱՆԱԿ Ելոյթներուն, ինչպէս նաեւ միութեան տարեկան հասութեաբեր ծեռնարկին՝ ճաշկերոյթի յաջողութեան մէջ իր բերած գործնական մասնակցութեան եւ նեցուկին համար:

Բազարատունի առաջին շնորհաւորեց արուեստագետ զոյգը՝ Արամ Ա. վեհափառի կողմէ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանին արժանանալու առիթով եւ գնահատեց անոնց ներդրումը՝ Համազգայինի եւ ընդհանրապէս լիբանանահայ մշակութային կեանքին մէջ:

Ան բարձրորդն գնահատեց նաեւ Համազգայինի Լիբանանի գործունեութիւնը՝ մշակութային բոլոր ոլորտներուն մէջ:

Հանդիպումը առիթ մը դարձաւ նաեւ անդրադառնալու մշակութային զանազան խնդիրներու եւ Հայաստան-Լիբանան մշակութային կապերու յաւելեալ խորացման:

### «ԾԻՆԻՇԵԱՆ ՅՈՒՆԱԿԻ ԶԵՆՈՒՐԿ»-ԻՆ ՆԱԽԱԶԵՆՈՒԹԵԱՐԿ ԶԱՆԴԻՊՈՒՄ ԲԱՐԵՐԱՐ ԱԼԵԶԵՐՕ ՊԵՉԻԲԵԱՆԻ ՀԵՏ



11 յունիսին ազգային բարերար Ալեքսեօ Պեզիբեան այցելեց «Ծինիշեան յիշատակի ծեռնարկ»:

Բարի գալուստի իր խօսքին մէջ «Ծինիշեան յիշատակի ծեռնարկ»-ի տնօրէն Զրիստին Դանիէլեան-Սարգիսեան իր խորին շնորհակալութիւնը յայտնեց Պեզիբեանի այցելութեան համար եւ լուսարակի տակ առաւ ժողովուրդին ծանայելու անոր ուղին՝ զայն նկատելով ներշնչման աղբիւր: Ան դիտել տուաւ, որ Պեզիբեան, հակառակ բազմաթիւ դժուարութիւններուն, իր կեանքով տոկոսնութեան եւ հաւատքի պայծառ օրինակ դարձաւ՝ ապացուցելով, որ Աստուծոյ հանդէպ վստահութիւնն ու հաստատականութիւնը կըրնան երազները իրականութիւն դարձնել:

Ալեքսեօ Պեզիբեան իր սրտի խօսքին մէջ անդրադարձաւ «Ծինիշեան յիշատակի ծեռնարկ»-ի առաքելութեան եւ



կիսեց իր անձնական կեանքի փորձառութեան բխած պատմութիւններ, որոնց ընդմէջէն քաջալերեց հանդիպումին ներկայ կիները՝ երբեք չյանձնուելու, ըլլալու ինքնավստահ, որպէսզի կարենան յաղթահարել բոլոր դժուարութիւնները եւ իրենց երազները իրականութիւն դարձնել:

Ան յիշեց իր կինը՝ հանգուցեալ Անի Պեզիբեանը, որ իր մայրուն աջակիցը եղած է կեանքի բոլոր փուլերուն եւ փորձառութիւններուն ընթացքին:

Հանդիպումի ւաւարտին բոլորը աղօթեցին Ասի Պեզիբեանի հոգիին խաղաղութեան համար:







ՊԱՍԵՆԹՈՂ

## ՀՄԸՄ ՅԱՂԹԵՑ ԱՆԹՈՒՆԻԷԻ ԴԱՇՏԻՆ ՎՐԱՅ (85-87) ԵՒ ԱՅՍՕՐ ՊԻՏԻ ՀԻՐԲՆԿԱԼԷ ԶԱՅՆ



Զորքեշարթի զիշեր Անթունիէ դպրոցի դաշտին վրայ ՅԱՐՄ-ի պասքեթբոլի տղոց խումբը շատ կարեւոր յաղթանակ մը տարաւ: Անթունիէի դէմ՝ 4-րդ դիրքի ճակատումի առաջին մրցումին:

Մրցումը ծայր աստիճան հետաքրքրական էր, եւ բոլոր մարզիկներն ալ իրենց կարելին ըրին պաշտպանելու եւ կետեր նշանակելու:

Մրցումի միակ ժխտական պահը 4-րդ մասի 3-րդ վայրկեանին էր, երբ դաշտին վրայ մարզիկներուն հոսած քրտինքն պատճառով սահեցաւ եւ վիրաւորուեցաւ: ՅԱՐՄ-ի ամերիկացի մարզիկ Թայլըր Պէյ:

3 վայրկեան դարմանուելէ ետք ան կրցաւ վերադառնալ դաշտ եւ կարելոր 3 ռիպաուստ հաւաքեց, տանք մը նշանակեց եւ շատ կարելոր սթիլ մը ձեռք ձգեց մրցումի աւարտէն 3 երկվայրկեան առաջ:

Թայլըր Պէյ ՅԱՐՄ-ի լաւագոյն մարզիկն էր ճորտընի կողքին: Ան 27 կետ եւ 12 ռիպաուստ ձեռք ձգեց մրցակից Մայքլը Ուաթքինզի դէմ, որ Լիբանանի լաւագոյն սենթըրն Է՝ միջին հաշուով 15 ռիպաուստ եւ 3,67 պլոք ընելով:

Կապրիէլ Աճեմեան իր վերջին մրցումներուն նման շատ լաւ ելոյթ կ'ուսենայ եւ կրցաւ 25 կետ նշանակել: Սթիվընզ 19 կետ եւ 15 եսիսթ ձեռք ձգեց:

Տուէյն Ճեքսըն 4 կետ նշանակեց, բայց շատ լաւ ձեռով օգնեց խումբին 7 ռիպաուստ, 4 սթիլ եւ 3 եսիսթ կատարելով: Անոր կանուխ ֆաուլերը (3 ֆաուլ առաջին մասին) քիչ մը ւաւելի զգուշ ձգեցին խումբին վնաս չհասցնելու նպատակով: Նոյն բանը պատահեցաւ մրցակից Ուաթքինզի հետ, որ կանուխ ֆաուլեր կատարեց եւ ձեռով մը

զգուշ խաղցաւ:

Ինչ կը վերաբերի մրցումին, արդիւնքը շատ մօտ էր մրցումին սկիզբէն մինչեւ վերջ: Միայն 2-րդ մասին, Անթունիէ կիսախաղէն 2 վայրկեան առաջ 9 կետի առաւելութիւն ունեցաւ, բայց Կապրիէլ Աճեմեան եւ մասնաւոր ճորտըն Սթեվընզ կիսախաղի պագըրին դաշտի կեդրոնէն 3 կետնոց կողովով արդիւնքը հաւասարեցուց 41-41-ի: Առաջին մասին ալ (19-19) հաւասար մնալէ ետք, 3-րդ մասի աւարտին 62-62 արդիւնքով հաւասար էին խումբերը:

Վերջին մասին, ՅԱՐՄ ամէն ձեռով ճնշեց եւ աւարտէն 1 վայրկեան առաջ 8 կետի առաւելութիւն ունեցաւ:

ՅԱՐՄ-ի նախկին մարզիկներն Փաթրիք Պու Ապպուտ 2 անգամ 3 կետնոց կողովներ նշանակեց, բայց ՅԱՐՄ անսխալ էր ազատ հարուածներով, ուր Կապրիէլ եւ Տուէյն 4 կետ ալ ւաւեցուցին, մինչ Այզիա Ուաշինկըն իր 31-րդ կետը նշանակեց, բայց մրցումին սուլիչը վերջ դրաւ մրցումին 87-85 արդիւնքով ՅԱՐՄ-ի յաղթանակով:

Այսօր ժամը 16:50-ին Սըզհէրի «Արբալետ-ՅԱՐՄ» մարզամշակութային համալիրի «Ատոմ եւ Սելա Թնճուկեան» դաշտին վրայ պետք է մեր համակիրները խիտ շարքերով ներկայանան դաշտ ոչ թէ միայն դիտելու, այլ նաեւ «տաք մթնոլորտ»-ով քաջալերելու խումբը յաղթանակ կերտելու, ինչ որ մեր տոմսը պիտի ըլլայ ֆայնըլ 4-ի:

Յոյսով, որ Թայլըր Պէյ կարենայ մասնակցիլ եւ արդիւնաւետ ըլլալ, մասնաւոր որ այս ճակատագրական մրցումին նոյնիսկ ամէնէն երիտասարդ պահեստի մարզիկը 100 տոկոս պետք է տայ խումբին՝ ՅԱՐՄ-ի անունը բարձր պահելու համար:

### Դ. ՂԱՍԱԿԱՐԳԻ ԼԵՌՆԱԼԻԲԱՆԱՆԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

## ՎԱՂԸ՝ ՀՄԸՄ ՊՈՒՐՆ ՀԱՄՈՒՏ - ԱՀԼԻ ՍԱՐՊԱ

Լիբանանի ֆութպոլի Դ. դասակարգի Լեռնալիբանանի ախոյեանութեան գծով վաղը, ժամը 17:00-ին, Սին Էլ Ֆիլի դաշտին վրայ, ՅԱՐՄ Պուրն Յամուտ պիտի մրցի Ահլի Սարպայի դէմ:

Անցեալ շաբաթ, Բ. հանգրուանի իր առաջին մրցումին, ՅԱՐՄ Պուրն Յամուտ կրցած էր 2-0 արդիւնքով շատ կարելոր յաղթանակ մը արձանագրել Շապապ Պըրժի դէմ, մինչ Ահլի Սարպա ճերմակ հաւասարութիւն արձանագրած էր Ռապիթաթ Ուարտանիէ խումբին հետ:

Ռապիթաթ Ուարտանիէ պիտի մրցի ժապալ Մաժտալպաանա խումբին դէմ, իսկ Լիուաա Պարժա՝ Շապապ Պըրժի դէմ:



### Դ. ՂԱՍԱԿԱՐԳԻ ԺԵՅՃԸՂԹԻ ԱՆՈՅԵԱՆԸՂԹԻՒՆ

## ՎԱՂԸ՝ ՀՄԸՄ - ՆՕ ԼԻՄԻԹՅ

Լիբանանի ֆութպոլի Դ. դասակարգի Պէյրուսի շրջանի ախոյեանութեան գծով վաղը ժամը 14:00-ին Անսարի դաշտին վրայ ՅԱՐՄ-ի ներկայացուցչական խումբը պիտի մրցի ՆՕ Լիմիթթ խումբին դէմ:

Անցեալ շաբաթ Ատիայի տունին առիթով որեւէ մրցում տեղի չունեցաւ Պէյրուսի մէջ:

ՅԱՐՄ Տինամոյի նման կետեր ունի 5 մրցումներէ ետք եւ կը պայքարի առնուազն Բ. դիրքին հասնելու:

ՆՕ Լիմիթթ 3 կետեր ունի եւ կը գրաւէ 10-րդ եւ վերջին դիրքը:



### ԸՍԲԵԱՍՍԱՐՏ

## - ՀԱՅԿ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՅԱՂԹԵՑ ԻՐ ԱԶՐՊԵՅՃԱՆՑԻ ՄՐՑԱԿԻՑԻՆ ԵՒ ԴԱՐՁԱՒ ԵՒՐՈՊԱՅԻ ԱԽՈՅԵԱՆ - ՄԱՐԱԹ ԱՃԷՄԵԱՆ՝ ԵՒՐՈՊԱՅԻ ԱԽՈՅԵԱՆ

Հիւսիսային Մակեդոնիայի մայրաքաղաք Սքփիէի մէջ տեղի ունեցող Եւրոպայի ըմբշամարտի պատանիներու ախոյեանութեան մրցումները կը շարունակուին:

60 քկ կշիռի յունահռոմեական ոճի ըմբշամարտի աւարտականին, Հայկ Մանուկեան դարձաւ Եւրոպայի ախոյեան՝ աւարտականին 11-3 արդիւնքով ջախջախելէ ետք Ալի Նազարովը:




Հայկ Մանուկեան

Մինչեւ աւարտական Մանուկեան իր բոլոր մրցակիցներուն ալ կրցած էր յաղթել՝ առանց կետ մը իսկ կորսնցնելու, յաղթելով խորալեւացի (9-0), հունգարացի (8-0) եւ գերմանացի (8-0) մրցակիցներուն: Կիսաւարտականին ան դուրս ձգած էր իտալացի մրցակի-

ցը՝ 9-0 արդիւնքով, բոլոր մրցումներուն ալ ժամանակէն առաջ յաղթելով:

Նախապէս Մարաթ Աճեմեան 51 քկ կշիռի մրցումներուն 10-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք ռուս մրցակից Ռիզվան Զայրպեքովը, Եւրոպայի ախոյեան դարձած էր առանց որեւէ կետ կորսնցնելու:

Աճեմեան իր կարգին տպաւորիչ յաղթանակներ արձանագրած էր ազրպէյճանցի (10-0), մոլտովացի



Մարաթ Աճեմեան

(8-0) եւ հունգարացի (9-0) մրցակիցներուն դէմ, բոլորին ալ՝ մրցումի աւարտէն առաջ:

Մինչեւ 6 յունիս երկարող Եւրոպայի այս ախոյեանութեան, Հայաստան մինչեւ օրս 2 ոսկի, 2 արծաթ եւ 1 պրոնզ մետալ չաիած է:

«ԷՆ. ՊԻ. ԷՅ.»

## ԻՆՏԻԱՆԱ ՅԱՂԹԵՑ ԵՐՐՈՐԴ ԴԱԿԱՏՈՒՄԻՆ՝ 116-107 ԱՐԴԻՒՆՔՈՎ

Այս եղանակին Ինտիանա Փէյսըրզ շատ կայուն չէր, բայց միշտ ալ կը վերադառնար յաղթելու՝ ամէն պարտութենէ ետք: Երեկ առաւօտ Նոյն բանը պատահեցաւ այս տարուան «ԷՆ. ՊԻ. Էյ.»-ի աւարտական մրցումին:

Առաջին մրցումին 1 կետի առաւելութեամբ յաղթելէ ետք Օքլահոմա Սիթիի դաշտին վրայ (111-110), Փէյսըրզ 2-րդ մրցումին 123-107 արդիւնքով պարտուած էր Ինստըրնէ:

Երեկ, 3-րդ մասին 9 կետով ետ մնալէ ետք, Ինտիանա ինքզինք գտաւ եւ իր ուժերը հաւաքելով կրցաւ 32 կետ նշանակել եւ 18 կետ ստանալով 116-107 արդիւնքով յաղթել:

Փէյսըրզ, որ կը մրցի այս տարուան թիւ 1 խումբին դէմ, պահ մը մոռցաւ իր մրցակիցը եւ կրցաւ իր խաղաճոճ պարտադրել մրցակից Թանտըրի վրայ:

Բնական ախոյեանութեան ընթացքին Ինտիանա Արեւելեան շրջանի 4-րդ դիրքը գրաւած էր եւ 82 մրցումներուն 32 պարտութիւն կրած էր, մինչ Օքլահոմա միայն 14 պարտութիւն կրած էր՝ լաւագոյն արդիւնքները ձեռք ձգելով:

Պենետիթթ Մաթուրին 27 կետ նշանակեց՝ դուրս գալով պահեստի աթոռներէն, մինչ թիւ 1 աստղ Թայրիս Հալիպըրթըն 22 կետ, 11 եսիսթ եւ 9 ռիպաուստ ձեռք ձգեց ի նպաստ Ինտիանայի, որ 4-րդ մրցումն ալ պիտի հիւրընկալէ:



«Այս ձեւի խումբ եմք, Պետք ունինք բոլորին, որ պատրաստ ըլլան: Միշտ Նոյն տղաքը չէ, որ պիտի փայլին կամ առաւելագոյն կետերը նշանակեն, բայց այս ձեռով կրնանք յաղթել», ըսաւ Փէյսըրզի մարզիչ Ռիք Զարլայ: Փաքալ Սիսքամ 21 կետ ւաւեցուց ի նպաստ Ինտիանայի, որուն պահեստի մարզիկները 49-18 արդիւնքով շատ ւաւելի արդիւնաւետ էին:

Օքլահոմա Սիթի Թանտըրի լաւագոյն մարզիկներն էին Ճէյլըն Ռիլիամս (26 կետ), Շէյ Կիւփըրս - Ալեքսանտր (24 կետ) եւ Չթթ Յովմկրեն (20 կետ):

Շաբաթ առաւօտեան տեղի պիտի ունենայ 4-րդ ճակատումը: Ըստ «ԷՆ. ՊԻ. Էյ.»-ի պատմութեան, վերջին 41 ախոյեանութիւններուն, երբ 2-րդ ճակատումին արդիւնքը 1-1 էր, 3-րդ ճակատումը շահող խումբը դարձած էր ախոյեան 33 անգամ:

### 2026-Ի ՄՈՆՏԻԱԼԻ ԶՏՈՒՄ

## ՈՒԶՊԵՔԻՍՏԱՆ ՄՈՆՏԻԱԼԻՆ ՀԱՍԱԲ

2026-ին տեղի ունենալիք մոնտիալի գտումի մրցումները շարունակեցան, եւ Ասիոյ մէջ 6 երկիրներ արդէն իսկ ապահովեցին իրենց տոմսերը, մինչ 6 այլ երկիրներ անցան 4-րդ հանգրուան:

Առաջին անգամ ըլլալով Յորդանան եւ Ուզպէստան իրաւունք ստացան մասնակցելու 48 երկիրներէ բաղկացած յառաջիկայ մոնտիալին:

Ուզպէստան դարձաւ առաջին երկիրը, որ կեդրոնական Ասիայէն կը հասնի մոնտիալին, եւ նախագահ Շավքաթ Միրզիյով եւ իր երկրի ազգային խումբի բոլոր մարզիկները եւ պատասխանատուները պատուեց՝ անոնց նուիրելով շքանշաններ եւ... ինքնաշարժներ:

Արդարեւ, ան 40 ինքնաշարժներ (ՊԻ. Ուայ. Տի.) նուիրեց ամէն անդամի, որ այս յաջողութեան մէջ դեր ունէր:

Հիւրընկալ երկիրներ Միացեալ Նահանգներու, Մեքսիքայի եւ Զանատայի կողքին Ճափոն, Հարաւա-



յին Զորեա, Յորդանան, Իրան, Ուզպէստան, Աւստրալիա, Արժանթին, Էքուատոր, Պրագիլ եւ Նոր Չեւանտա երկուս 13 ազգային խումբեր, որոնք իրենց տոմսերը ապահովեցին մինչեւ օրս:

Նշենք, որ 2026-ի մոնտիալը տեղի կ'ունենայ 11 յունիսէն 19 յուլիս 2026-ի միջեւ, ինչպէս նշեցինք պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով 48 ազգային խումբերու մասնակցութեամբ:

## ՄԵՏԻՆՍՔԻ «ՔԻԵՒԻ ՓՈԽԶԻՋՄԱՆ ԴԻՄԵԼՈՒ ԱՆՊԱՏՐԱՍՏ ԸԼԼԱԸ ԿՐԱՅ ԱՆՈՐ ՆՈՐ ՏԱՐԱԾՔՆԵՐ ԱՐԺԵԼ»

Ռուսիոյ նախագահի օգնական Վլատիմիր Մետինսքի յայտարարած է, որ Ուքրանիան ցոյց կու տայ, թէ պատրաստ չէ բանակցութիւններուն: Անոր կարծիքով, նման մարտավարութիւն կրնայ վտառաւորացնել ներկայ տագնապին մէջ քիւի կացութիւնը:

Ռուսական բանակցային պատուիրակութեան ղեկավարը ամերիկեան «Ուոլ Սթրիթ Ժընըլ» օրաթերթին յայտնած է. «Մենք խաղաղութիւն կ'ուզենք»՝ անելցնելով. «Եթէ Ուքրանիան շարունակէ առաջնորդուիլ այլ պետութիւններու շահերով, ապա ռուսական կողմը ստիպուած պիտի ըլլայ արձագանգելու»:

Մետինսքիի համաձայն, փոխգլխաւոր չղիմեղ Ուքրանիոյ շարք մը նոր տարածքներ պիտի արժէ:

Ուքրանիոյ նախագահ Վոլոտիմիր Չեկենսքի մէկ օր առաջ հունգարական «Վալց Անլայն» օրաթերթին հետ հար-



ցազորոյցի ընթացքին ըսած էր, որ Պուտին մէջ Ռուսիոյ հետ բանակցող ուքրանական պատուիրակութիւնը չունի լիազօրութիւններ՝ խաղաղութեան հաւանական պայմանագիրի ծիրին մէջ հաւանական տարածքային փոփոխութիւնները քննարկելու:

Չեկենսքիի համաձայն, տարածքներու շուրջ միայն ինք կրնայ բանակցիլ եւ ատիկա պիտի ընէ միայն Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինի հետ:

«Ես այս հարցով իմ դիրքորոշումս ուրիշներու հետ պիտի չքննարկեմ», ըսած է Ուքրանիոյ նախագահը:

Չեկենսքի վերստին պնդած է, որ Ուքրանիան իր բռնագրաւուած տարածքները իրաւաբանօրէն չի ճանչնար իբրեւ ռուսական, սակայն անկարկած է, որ զինադադարէն ետք տէ ֆաքթօ ատիկա կրնայ տեղի ունենալ:

### ԱՐԴԻՐՆԵՐ «ԱՔՍԻՈՍ»-ԻՆ

## ԹՐԱՄՓ ՆԵԹԱՆԻԱՀՈՒԻՆ ԸՍԱԾ Է, ՈՐ ԻՐԱՆԻ ՎՐԱՅ ՅԱՐՁԱԿՈՒՄԻՆ ԴԵՄ Է, ՈՐՈՎՀԵՏԵԻ ԱՆՈՐ ՀԵՏ ՀԱՄԱՋԱՅՆՈՒԹԵԱՆ ԱՌԻԹ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ

Ամերիկացի պաշտօնատար մը եւ իսրայէլացի պաշտօնատար մը «Աքսիոս»-ին յայտնած են, թէ Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփ Իսրայէլի վարչապետ Պենիամին Նեթանիահուին ըսած է, թէ ներկայիս Իրանի վրայ զինւորական յարձակումի մը դէմ է, որովհետեւ կը կարծէ, թէ անոր հետ հիւլեական համաձայնութիւն գոյացնելու առիթ գոյութիւն ունի:

Ամերիկեան կայքը նշեց, որ Սպիտակ տան ղեկավարը այս մասին յայտնած է երկուշաբթի օր Նեթանիահուի հետ հեռաձայնային հաղորդակցութեան ընթացքին:

Սակայն «Ֆոքս Նիւզ» պատկերասփիւռի կայանը հաղորդեց, թէ Թրամփ երեքշաբթի օր յայտնած է, թէ Իրանը այժմ բանակցութիւններուն մէջ «աւելի կարծր» դիրք որդեգրած է:

«Նիւ Եորք Թայմզ» օրաթերթը, մեքերելով Իսրայէլի վարչապետին մօտիկ անձերու խօսքեր, հաղորդեց, որ Նեթանիահուին «անակնկալի մատուցեալ Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփի» Իրանի հետ դիւանագիտական լուծումի որոնման վրայ պնդումէն»:

Ամերիկեան օրաթերթը նշեց. «Թրամփի եւ Նեթանիահուի վերջին գործը պարզապէս երկուքին միջեւ հետզհետէ



աւելի լարուող յարաբերութեան մէկ նոր երեւոյթն էր»:

«Թրամփ Նեթանիահուի հետ խօսեցաւ վստահ ըլլալու համար, որ ան զինւորական արարքով սպառնալով Ուաշինկթընի եւ Թեհրանի միջեւ բանակցութիւնները պիտի չխանգարէ», գրեց «Նիւ Եորք Թայմզ»:

Նշենք, որ Իրանի արտաքին գործոց նախարարութիւնը երկուշաբթի օր յայտնեց, որ մօտ օրէն Միացեալ Նահանգներուն պիտի ներկայացնէ հիւլեական համաձայնութեան իր առաջարկը՝ պատասխանելով ամերիկեան առաջարկին, որ Թեհրան անընդունելի կը նկատէ:

## ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ ...

Շարունակուած Ա. Էջէն



### ՓԵՋԵՇՔԻԱՆ. «ԱՌԱՋՆՈՐԴԵ ...»

Շարունակուած Ա. Էջէն

Մենք երբեք պիտի չընդունինք այն պայմանները, որոնց պարագային պետք է ամբողջութեամբ դադրեցնելք գիտական հետազօտութիւնները, իսկ յետոյ սպասենք Արեւմուտքի հաւանութեան՝ արդիւնաբերութեան, բժշկութեան, գիւղատնտեսութեան եւ այլ գիտութիւններու համար անհրաժեշտ հիւլեական Նիւթըր ստանալու համար», ըսած է Փեգեշեան:

«Ո՞վ անոնց իրաւունք տուած է որոշել, թէ կրնա՞նք գիտական հետազօտութիւններով զբաղիլ, թե՞ ոչ: Մենք երբեք պիտի չխոսարհինք ճնշումի առջեւ: Առաջնորդը յստակ յայտարարած է, որ Իրանի հիւլեական գէնք պիտի չստեղծէ, եւ ատիկա մեր հաստատուն դիրքորոշումն է», ընդգծած է Իրանի նախագահը:

### ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՆԱԶԱՐԵԹ ՍԱՊՈՒՆԾԵԱՆԻ մահուան քառասունեան առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի կիրակի, 15 յունիս 2025-ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ, յաւարտ Ա. պատարագի:

# ՄԵՐ ՇՈՒԿԱՆ

«Մասթըր Մոյ» Պուրճ Զամուտ

ՀՈԿԱՆԱԽՈՐՈՒԹԵԱՄԲ ՊՈՒՐՃ ԶԱՄՈՒՏ ԶԱՂԱՔԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՄԵՐ ՇՈՒԿԱՆ - VERNISSAGE

Կիրակի, 22 ՅՈՒՆԻՍ 2025-ին,

կէսօրուան ժամը 12:00-էն

մինչեւ երեկոյեան ժամը 8:00

ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ - ԱՆԱԿԱԿԱՆԵՐ

Կրպակներ ապահովելու, ինչպէս նաեւ մանրամասնութեանց համար հեռաձայնել 03/968039 թիւին

Facebook: ՄԵՐ ՇՈՒԿԱՆ

Սիրունի Պուտագեան Փոնա

«Ազգակ»-ի մատենաշար թիւ 1

## ՇՆՈՐՀԱՀԱՆՂԵՍ

ԱԶԴԱԿ

Հովանաւորութեամբ

ԳԵՐԸ. Տ. ՇԱՀԷ ՍՐԶ. ՓԱՆՈՍԵՆԻ

«ՀԱՅՏԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԽՈՐՈՒՄԸ ԵՒ ՄԵՐԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ»

Հեղինակ՝ ՅԱՐՈՒԹ ԳԵՔԻՃԵԱՆ

Հատորը կը ներկայացնէ՝ ՍԵՂԱ ԽՏՃԵԱՆ

Ողջոյնի խօսք՝ ԿԱՐՈ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 20 Յունիս 2025-ին, երեկոյեան ժամը 7:30-ին, «Ազգակ»-ի «Փիւնիկ» սրահին մէջ

ԷՅՍՈՐ՝ «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»-ԷՆ

Radio Voice of Van - Վանայ Զայն FM: 94.7 եւ 95 MHz

|                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                     |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                       |
|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| <p>7.00- Զայլերգներ / Առաւօտ լուսոյ</p> <p>7.03- Առաւօտ լուսոյ / Բարի լոյս</p> <p>7.15- Հանդարտ երգեր</p> <p>7.30- «Երկու բարեւ»</p> <p><b>8.30- Լուրեր - Առողջապահական խորհուրդ</b></p> <p>9.00- «Երկու բարեւ»</p> <p>9.30- Բարեւ հարցազրոյց. հիւրեր Զաւէն Վրդ. Նաճարեան եւ Ժակին Մարգարեան (ուղիղ՝ դիմատեսքով)</p> <p>10.00- Խանդավառ երգեր</p> <p><b>10.30- Հայկական աշխարհի լուրեր (ուղիղ՝ դիմատեսքով)</b></p> <p>10.45- Եղանակներ</p> <p>11.00- «Հայրենասիրութիւն»՝ տոքթ. Յակոբ Այնթապեանի հետ</p> <p>11.30- Նոր երգեր</p> <p>12.00- «Երգային քաղաքականութիւն»</p> <p>12.15- Սիրային երգեր</p> <p>1.00- Ազգային երգեր</p> <p><b>1.30- Լուրեր - Առողջապահական խորհուրդ</b></p> <p>2.00- «Յիշատակելիները» (Վահէ Պաղտասարեան)</p> | <p>2.05- Յեղափոխական երգեր</p> <p>3.00- «Ուաքֆէ ու մաուաֆ» (ուղիղ՝ դիմատեսքով)</p> <p>4.30- Արաբերէն երգեր</p> <p><b>5.00- «Վանայ Զայն»-ը երեկոյեան</b></p> <p>5.05- «Ժամանակ» Վարդանիսի հետ» (ուղիղ՝ դիմատեսքով)</p> <p>6.00- «Վերապրում» (Կրկ.)</p> <p><b>6.30- Լուրեր - Առողջապահական խորհուրդ</b></p> <p>6.50- Սիրուած երգիչներու կենդանի կատարումներ</p> <p>7.30- Խանդավառ երգեր</p> <p>8.00- Օրուան երգիչ (Խաչիկ Չէնեան)</p> <p>8.30- Նոր երգեր</p> <p><b>9.30- Հայկական աշխարհի լուրեր (Կրկ.)</b></p> <p>9.45- Սիրային երգեր</p> <p>11.00- Golden oldies</p> <p>12.00- «Յիշատակելիները» / Յեղափոխական երգեր</p> <p>2.00- Չուգերգներ</p> <p><b>3.00- Կրկնութիւններ</b></p> <p>4.15- Հայերէն այլազան երգեր</p> <p>6.00- Հանդարտ երաժշտութիւն</p> |
|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|

Ձեր մնայուն ընկերակիցը

Radio Voice of Van:Live

DOWNLOAD